ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ԴԱՀԿ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿԻ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15.01.2024 11:16

Հարգելի՛ փաստաբաններ,

2024 թվականի հունվարի 24-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչները (ղեկավար կազմը) կներկայացնեն ԴԱՀԿ էլեկտրոնային նոր հարթակը:

Հանդիպման ընթացքում քննարկվելու են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային նոր հարթակի հնարավորություններին առնչվող հարցեր: Փաստաբանները հնարավորություն կունենան հնչեցնելու հարթակի գործիքների կիրառելիության վերաբերյալ իրենց հուզող հարցերը:

Տեղեկացնում ենք, որ քննարկմանը կարող եք մասնակցել ինչպես առկա, այնպես էլ հեռավար եղանակով, որի մասին պարտադիր անհրաժեշտ է նշել գրանցման վերաբերյալ Ձեր պատասխան նամակում:

Մասնակցության համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 24.01.2024թ.՝ ժամը 10:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անուն, ազգանունը և արտոնագրի համարը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })